Իրաքում ՀՀ դեսպանի մեկնաբանությունը

«Այս հոդվածի միջոցով մենք ընթերցողներին ենք ներկայացնում ճշմարտությունը հայ-ադրբեջանական սահմանում վերջին թշնամական և սադրիչ գործողությունների վերաբերյալ: Այս տարվա հուլիսի 12-ից Հայաստանի հյուսիսարևելյան սահմանում Ադրբեջանի կողմից մեկնարկած ռազմական գործողությունները և Ադրբեջանում քաղաքական և ռազմական զարգացումներին զուգահեռ, հատկապես վերջին ժամանակաշրջանում, միայն հստակ արտահայտություն են այն մասին, որ վերոհիշյալ ամսաթվին սկսված ռազմական հարձակումը անարդար և պլանավորված ռազմական նպատակակետ է դարձել:

Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի նախագահն ունի տարածքային նկրտումներ Հայաստանի, օրինակ, Զանգեզուրի տարածաշրջանի նկատմամբ: Նա պնդում է, որ մեր երկիրը «ադրբեջանական տարածք է, որի վրա հիմնված է ժամանակակից Հայաստանը»: Վերջին ամիսներին նա իր հրապարակային ելույթներում վերադարձել է իր ագրեսիվ ոճին՝ վստահեցնելով իր ժողովրդին, որ Ադրբեջանը կարող է լուծել ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով: Հայաստանը վաղուց միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել է հակահայկական ատելության քարոզչության վրա, որը խրախուսվում և աջակցվում է Ադրբեջանի ղեկավարության կողմից: Այդ ատելությունը ոչ այլ ինչ է, քան Ադրբեջանի իշխանությունների փորձը՝ շեղելու արտաքին աշխարհի ուշադրությունը բռնատիրական կառավարման բնույթից, կոռուպցիայի դրսևորումներից, մարդու իրավունքների բացահայտ խախտումներից, և իրենց երկրի իշխանությունների կողմից գործադրվող բռնաճնշումներից: Ադրբեջանում հակահայկական ատելությունը հասել է շատ վտանգավոր մակարդակի, և Ադրբեջանի քաղաքական և ռազմական ղեկավարությունը օգտագործում է այս ատելությունը՝ ռազմական բախումներ հրահրելու նպատակով, որն ընթանում է լայնամասշտաբ ագրեսիայով, լինի դա Հայաստանի սահմաններին, թե՝ ամբողջ շփման գծի երկայնքով: Մի քանի օր առաջ Ադրբեջանը սկսեց ռազմական գործողություններ և ռմբակոծեց բնակելի տներ և քաղաքացիական ենթակառուցվածքներ Հայաստանի Տավուշի մարզում, մասնավորապես՝ Բերդ քաղաքը, Այգեպար, Մովսես, Չինարի և Վերին Կարմիրաղբյուր գյուղերը՝ օգտագործելով ականանետներ և մահացու հրթիռներ՝ ավերելով դրանք: Հատկանշական է, որ Ադրբեջանի կողմից քաղաքացիական ենթակառուցվածքների և խաղաղ բնակչության դիտավորյալ թիրախավորումը նորություն չէ:

Տարիներ շարունակ ականատես ենք եղել դրան, ինչպես դա տեղի ունեցավ 2016թ. ապրիլյան պատերազմում, երբ ադրբեջանական բանակը համարձակվեց իրականացնել միջազգային մարդու իրավունքի կոպիտ խախտումներ: Այդ գործողությունները ոչ այլ ինչ են, քան հայ ժողովրդի նկատմամբ ատելության և անհանդուրժողականության արտահայտություններ: Այդ թշնամական քաղաքականությունը պաշտոնապես խրախուսվում է Ադրբեջանի ամենաբարձր մակարդակներից: Հետևաբար, միջազգային հանրության պարտքն է դատապարտել այդ խայտառակ և ամոթալի ադրբեջանական գործալակերպը, իսկ այս հարցում պատասխանատվությունը կրում է Ադրբեջանի ռազմական և քաղաքական ղեկավարությունը: Ադրբեջանի զինված ուժերը հրետանային զինամիջոցները տեղակայում են բնակավայրերի տների միջև՝ առանց ուշադրություն դարձնելու, որ այդ գործողությունը վտանգում են նրանց քաղաքացիական բնակչությանը: Այդ ամոթալի մարտավարությունը նորություն չէ, քանի որ այն կիրառվել է նաև 2016թ.

ապրիլյան պատերազմի ընթացքում: Սա ապացուցում է, որ Ադրբեջանի ռազմական քաղաքական ղեկավարությունը ամենևին էլ մտահոգված չէ իր ժողովրդի ապահովությամբ և անվտանգությամբ: Զարմանալի չէ արդեն, որ նրանք չեն մտահոգվում Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությամբ:

Հայաստանի Մեծամորի ատոմակայանը թիրախավորելու Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից հրթիռներ արձակելու սպառնալիքն ընդամենը վկայում է Ադրբեջանում ռազմական և քաղաքական ղեկավարության հուսահատության մասին: Միևնույն ժամանակ, սպառնալիքն ինքնին հանցագործություն է մարդկության դեմ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությանը սպառնացող գործողությունները, ընդհանուր առմամբ, միջազգային հումանիտար իրավունքի կոպիտ խախտում են, մասնավորապես, Ժնևյան կոնվենցիայի առաջին լրացուցիչ արձանագրություն: Նման սպառնալիքները ահաբեկչական պետության հստակ պատկեր են և Ադրբեջանի ցեղասպան հանցավոր մտադրությունների հստակ հայտարարություն: Ավելին, Ադրբեջանի ղեկավարության նման հայտարարությունները սպառնալիք են հանդիսանում տարածաշրջանի բոլոր ժողովուրդների, ներառյալ՝ ադրբեջանցի ժողովրդի համար: Ադրբեջանի կողմից արտահայտված միջուկային սպառնալիքները վկայում են այդ երկրի պատասխանատվության բացարձակ բացակայության մասին, որը միջազգային հանրության անդամ է հանդիսանում: Ինչ վերաբերում է Թուրքիայի հայտարարություններին, ապա դա, Հայաստանի կարծիքով, ուղղակի խրախուսում է Ադրբեջանի գործելակերպը, ինչը լիովին անպատասխանատու և անընդունելի է, հատկապես ներկայիս լարված իրավիճակում:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի ղեկավարության վերջին հայտարարություններին, որոնք վերաբերում են խաղաղության գործընթացին, ապա հարկ է նշել, որ Ադրբեջանը բանակցություններ է վարել ինչպես Արցախի (Լեռնային Ղարաբաղի), այնպես էլ Հայաստանի Հանրապետության հետ, այնուհետև հրաժարվել է բանակցել Արցախի հետ: Բայց եթե այժմ Ադրբեջանը հրաժարվի բանակցություններ վարել Հայաստանի հետ, ապա պարզ չէ, թե ում հետ է բանակցելու ղարաբաղյան հակամարտության շուրջ: Պարզ չէ նաև, թե Ադրբեջանը ցանկանում է վերսկսել խաղաղ բանակցությունները, թե՝ ոչ:

Հայ-ադրբեջանական սահմանին հարաբերական ներկա հրադադարը վերականգնվել է հուլիսի 16-ից: Հուսով ենք, որ այն կպահպանվի»:

Հրաչյա Փոլադյան
Իրաքում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան